

ԱՇՈՏ ԺՈՐԱՅԻ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Ծնվել է 1958թ. սեպտեմբերի 17-ին
Երևանում:

1965-1975թթ. ընդունվել և ավարտել է
Երևանի Յովհաննես Պողոսյանի անվան թիվ 82
միջնակարգ դպրոցը:

1977-1979թթ. ծառայել է խորհրդային
բանակում:

1980-1982թթ. աշխատանքին զուգահեռ
ընդունվել և ավարտել է Երևանի շինարարության
տեխնիկական առաջադիմության համալսարանի տնտեսագիտական
ֆակուլտետը՝ ստանալով տնտեսագետի որակավորում, 1984-
1987թթ.՝ Երևանի սննդի արդյունաբերության տեխնիկումը՝ ստանալով
տեխնիկ - տեխնոլոգի որակավորում, 2001-2005թթ.՝ Երևանի ֆինանսա-
բանկային և բորսայական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝
ստանալով իրավաբանի որակավորում:



1975-1977թթ. աշխատել է Երևանի ֆրեզերային հաստոցների
գործարանում որպես փականագործ:

1979-2002թթ. աշխատել է <<Երարդշին>> տրեստում որպես
մատակարար, աշխատանքի և վարձատրության բաժնի ինժեներ, տրեստի
ավագ ինժեներ, իսկ 1999-2002թթ.՝ <<Երարդշին>> ՓԲԸ-ի փոխտնօրեն:

1996 և 1999 թթ. երկու անգամ անընդմեջ ընտրվել է Երևանի Արաբկիր
համայնքի ավագանու անդամ:

1998թ. ընտրվել է <<Երևանի ավագանիներ>> ՅԿ-ի վարչության
անդամ, 2000թ.՝ նույն ՅԿ-ի փոխնախագահ, 2001թ.-ից Հայաստանի
ավագանիների ասոցիացիայի փոխնախագահն է:

2001թ. <<Ուրբան>> ինստիտուտի ծրագրի շրջանակներում
դասախոսել է Հայաստանի մարզերի և Երևան քաղաքի համայնքների
ներկայացուցիչների համար <<Բյուջետավորում և ֆինանսական կառավարման
քաղաքականություն>> թեմայով անցկացված սեմինարին:

2003 թվականից <<Արեգ>> համատիրության նախագահն է, ինչպես
նաև <<Միեր և Վահե>> ՍՊԸ-ի տնօրենը:

Ամուսնացած է, ունի երկու դուստր և մեկ որդի: